«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Քաղաքական գործընթացը ԼՂՀ-ում **1991-1997**թթ.
ԱՌԱՐԿԱ	պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Տոմա Ավագյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի թիվ **8** հիմն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԵՎ ՀՌՉԱԿՈՒՄԸ.....6

1.1.Հանրահավաքները և շարժման հետագա ծավալումը.....6

1.2.Հասարակական__քաղաքական կյանքը 1991-1997 թթ 11

ԳԼՈՒԽ 2.ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ.....20

2.1.Լեռնայի Ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացումը..... 20

2.2. Միջազգային խաղաղարար ջանքերը1991-1997 թթ.....23

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....31

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....34

Ներածություն

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը. «Լեռնային Ղարաբաղը, խորհրդային կարգերի հաստատումից հետո 1921 թ. ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի հուլիսի 5-ի ապօրինի որոշումով բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին: Այնուհետև, 1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի Կենտգործկոմը ընդունեց հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմավորման մասին»: Ադրբեջանի կողմից տասնյակներ շարունակ

կիրառված հակահայկական քաղաքականությունը, հայ բնակչության մարդկային և ազգային արժանապատվության ոտնահարումը ստեղծեցին ծայրահեղ լարված իրավիճակ: 1985 թ. հետո գորբաչովյան՝ այսպես կոչված «վերակառուցման» քաղաքականությունը ԼՂ-ի հայությանը հնարավորություն ընձեռեց կրկին հանդես գալ իր ոտնահարված իրավունքների պաշտպանությամբ եւ ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու պահանջով:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու եւ Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու մասին: Սակայն ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն 1988 թ. փետրվարի 21-ին ընդունեց ժողովուրդների ինքնորոշման միջազգային սկզբունքներին հակասող որոշում, որով Ղարաբաղյան շարժումը որակվեց որպես «ծայրահեղական» եւ «նացիոնալիստական», ինչպես նաեւ՝ փորձ արվեց հիմնահարցի քաղաքական լուծումը փոխարինել տարբեր միջոցառումներով: Անտեսելով հայ բնակչության ինքնորոշման իրավունքը՝ Ադրբեջանը Մոսկվայի հովանավորությամբ նորից նախընտրեց հարցի կարգավորման, ավելի ճիշտ՝ մեռցման ոչ քաղաքակիրթ մեթոդները՝ կազմակերպելով էթնիկ զտումների գործընթաց: Այդ իրավիճակը պահպանվեց մինչեւ 1991 թ., երբ նշմարվեց ԽՍՀՄ լուծարման հեռանկարը: Այդ պահից փոխվեց Արցախյան շարժման բնույթը, եւ այն ընդունեց անկախ պետականություն կերտելու շեշտված ուղղորդում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ձեւավորվեց ԽՍՀՄ-ի լուծարման գործընթացում՝ ԼՂԻՄ-ի եւ հայաբնակ Շահումյանի շրջանի հիմքի վրա 1991 թ. սեպտեմբերի 2-ին ընդունված անկախության հռչակագրով[1]: Իրական անկախության ճանապարհին ԼՂՀ ստեղծումն ամենավճռորոշ և գործնական քայլն էր: Դրան հաջորդեցին իրավական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական ինքնահաստատման գործողություններ, ինչպիսիք են Գերագույն խորհրդի ձեւավորումը, ապա ՊՊԿ-ի ստեղծումը և այլն: Սրան հաջորդեց Արցախյան առաջին պատերազմը, և համառ մարտերի արդյունքում ձեւավորված Պաշտպանության բանակը ոչ միայն կասեցրեց թշնամու հարձակումները, այլև հակահարձակման անցնելով՝ 1993-1994 թթ. ազատագրեց Ադրբեջանի կողմից օկուպացված ԼՂՀ տարածքները: Պատերազմի ճակատներում ջախջախիչ պարտությունները, ինչպես նաև դրանց հետևանքով առաջ եկած սոցիալ-տնտեսական սուր ճգնաժամը հարկադրեցին Ադրբեջանին 1994 թ. մայիսի 5-ին Ղրղզստանի մայրաքաղաք Բիշկեկում կրակի դադարեցման պայմանագիր ստորագրել ՀՀ-ի և ԼՂՀ-ի հետ, իսկ մայիսի 12-ին կողմերն անժամկետ զինադադարի պայմանագիր ստորագրեցին Մոսկվայում: Զինադադարի հաստատումից հետո սկիզբ առան հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված բանակցություններ՝ Մինսկի խմբի համանախագահների գլխավորությամբ[2]:

Գիտական հետազոտության առարկան քաղաքական գործընթացներն են ԼՂՀ-ում 1991-1997 թթ-ին :

[1] Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ, գիրք Գ, Ստեփանակերտ, Դիզակ Պլյուս, 2007, էջ 307:
[2] Մկրտումյան Լ., Հայոց պատմություն, Երեւան, 2016, էջ 429:

Ձեռնարկելով աշխատանքը նպատակ է դրվել բացահայտել նաև տվյալ ժամանակահատվածի քաղաքական և ռազմական որոշ գործիչների ներդրումը պետականության կերտման գործընթացում, որոնց մի մասը քաղաքական ուժերի բախումների արդյունքում առ այսօր դուրս է մնացել պատմության էջերից:

Աշխատանքում փորձ է արվել լուծել հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել 1991-1997 թթ. ԼՂ-ի պետական ստեղծման պատմությունը
- Պետական շինարարության գործընթացը վերլուծել ըստ փուլերի
- Բացահայտել ԼՂՀ ներքին և արտաքին քաղաքական գործընթացների պատմական նշանակությունը և ազդեցությունը պետական շինարարությունա գործում
- Վեր հանել պետականակերտման գործընթացում տեղ գտած որոշ ձախողումների պատճառները:

Ուսումնասիրությունը կատարվել է պատմականության և պատմահամեմատական մեթոդով, պատճառների վերլուծությամբ, օրինաչափության հաշվառմամբ: Աղբյուրագիտական մեջ մեծ արժեք է ներկայացնում Տ. Հակոբյանի «ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ..)» գիրքը: Արցախյան հիմնախնդրի բացահայտմանն են ուղղված Հ. Աբրահամյանի մի շարք գրքեր: Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ միջազգային միջնորդական նախաձեռնություններին է անդրադարձել Տ. Բալայանը: Աղբյուրագիտական մեծ արժեք են ներկայացնում նաև Վ. Բալայանի, Վ. Բաղրյանի, Մ. Հարությունյանի, Բ. Ուլուբաբյանի, Լ. Մկրտումյանի և մի շարք այլ հեղինակների աշխատություններ: Աշխատանքը գրելու համար մեթոդական հիմք ընդունել ենք հայ և ռուս հեղինակների մենագրությունները[3], և հոդվածները: Մեծապես օգտվել ենք նաև տպագիր մամուլի[4] և համակարգչային կայքէջերի[5] նյութերից:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Առաջին գլուխը վերնագրված է՝ Արցախյան շարժման նոր փուլը, որտեղ խոսվում է Արցախյան շարժման ծավալման, արցախահայության ինքնորոշման ու ԼՂՀ անկախության հռչակման մասին: Երկրորդ գլուխը վերնագրված է՝ բանակցային գործընթացը 1991-1997 թթ-ին, որտեղ խոսվում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացման ու խաղաղարար միջազգային ջանքերը 1991-1997 թթ-ի մասին:

---

[3] Հարությունյան Վ. Բ., Արցախ, հիմնահարցի ակունքները, Ստեփանակերտ, 1998, 105 էջ., Հակոբյան Տ. <<ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ..) Երևան, Էդիթ պրինտ 2011, 208 էջ; Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ.., Երևան, Ամարաս, 2004, 224 էջ; Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Երևան, 1997, 822; Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002, 417 էջ; Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Երևան, Ամարաս, 2001, 240 էջ; Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ, գիրք Գ, Ստեփանակերտ, Դիզակ Պլյուս, 2007, 744 էջ; Աբշակյան Ա., Արցախյան գոյապայքարը 1985-1992թթ.., Երևան, Լինգվա, 2004թ, 246 էջ; Բաղրյան Վ., Ցեհոմեն, Ստեփանակերտ,Սոնա, 1998 թ, 272 էջ;

[4] <<Ազգակ>> (Բեյրութ), 28.II.1998, Բացառիկ, էջ 99., <<Հայաստանի Հանրապետություն>>, 4.II.1992., <<Դրոշակ>>, 1992, N 10, էջ 7., <<Երկիր>>, 8.V.1992:

[5] http://www.findarmenia.com/arm/history/2., http://gov.nkr.am/?section=resources/index&type=9&subtype=47., http://www.nankr.am/hy/14.

Գլուխ 1. ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԵՎ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1.1.Հանրահավաքները և շարժման հետագա ծավալումը 1918-1923թթ. Արցախահայության ինքնորոշման համար պայքարը, տևական ժամանակահատվածում մնալով անթեղված և գորբաչովյան «վերակառուցման և հրապարակայնության ուղղությամբ ապավինելով»՝ 1988թ. հայտնի դեպքերով վճռականորեն մտավ նոր փուլ: Ի սկզբանե հանդիսանալով ԽՍՀՄ-ի հիմնահարց՝ այն վերածվեց ռազմաքաղաքական անլուծելի թնջուկի, իսկ կայսրության փլուզման և Ադրբեջանի զավթողական քաղաքականության հետևանքով այն միջազգայնացվեց:[6]

Արցախյան ազատամարտի սկզբնավորման և շարժման ակունքների բազմակողմանի քննությունն ու հաղթական նվաճումների բոլոր փուլերի գիտական հետազոտումը հայ պատմագիտության կարևոր խնդիրներից է: Այն ունի արդիական ու քաղաքական կարևոր նշանակություն:

Խորհրդային Միությունում ազատագրական շարժումների ծավալումը վերակառուցման քաղաքականության անմիջական հետևանք էր:[7] Իր ազգային արժանապատվությունը պաշտպանելու համար առաջինը հանդես եկավ արցախահայությունը:

1988թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանը, երկրի Սահմանադրությանը համապատասխան, որոշում ընդունեց: Մարզխորհուրդը դիմեց Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու մասին:

Հայաստանում և սփյուռքում արցախահայության հետ համերաշխության զանգվածային ցույցերի մեծ ալիք սկսվեց: Սակայն ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը հենց սկզբից Ղարաբաղյան շարժման նկատմամբ բացասական դիրք գրավեց: Հանրահավաքներին մասնակցում և ելույթներ էին ունենում հայ ականավոր գիտնականներ, մշակույթի և արվեստի գործիչներ, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, արձակագիր Սերո Խանզադյանը, դերասան Սոս Սարգսյանը և ուրիշներ:

Թեև հետագայում հանրապետության կուսակցական նոր ղեկավարությունը (1988թ. մայիսից ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին փոխարինեց Սուրեն Հարությունյանը) ջանքեր էր գործադրում շարժումը գլխավորելու, սակայն հաջողության չէր հասնում: Ղարաբաղյան շարժումը համակարգելու նպատակով մարտ ամսին ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն, որն իր մասնաճյուղերը ստեղծեց հանրապետության շրջաններում:

---

[6] Հակոբյան Տ.,ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ..) Երևան, «Էդիթ պրինտ» հրատ., 2011 էջ 18:
[7] http://www.findarmenia.com/arm/history/2.

Անգամ Սումգայիթում տեղի ունեցած վայրագություններից հետո Կենտրոնը ղարաբաղյան հիմնահարցը ներկայացնում էր ոչ թե քաղաքական, այլ զուտ սոցիալ-տնտեսական բնույթ ունեցող խնդիր: Ահա թե ինչու 1988թ. մարտի 24-ին ԽՄԿԿ Կենտկոմի և Մինիստրների խորհրդի որոշմամբ ԼՂԻՄ-ին տրամադրվեց 400 մլն ռուբլի գումար՝ մարզում կուտակված սոցիալ-տնտեսական և մշակութային հիմնահարցերը լուծելու համար:[8] Ադրբեջանի ղեկավարությունը այդ գումարը օգտագործեց մարզի ադրբեջանական բնակավայրերում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար;

Վերոնշյալ սպառնալիքների ֆոնին՝Ստեփանակերտում և շրջաններում թաղային և համայնքային սկզբունքներով ծնունդ առան ընդհատակյա ինքնապաշտպանական ջոկատներ: Գնալով շարժումը մեծ ծավալներ էր ընդունում: Հանրահավաքներին ու ցույցերին զուգընթաց՝ հանրապետությունում և Արցախում սկսվեցին զանգվածային գործադուլներ: Հայ ժողովուրդը ԽՍՀՄ կառավարությունից պահանջում էր արդարացի լուծել Ղարաբաղի հիմնահարցը, տալ սումգայիթյան եղեռնագործության քաղաքական գնահատականը, Հայաստանի իշխանություններից պահանջում էր ընդառաջ գնալ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշմանը[9]:

1991 թ. օգոստոսից հետո ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացի արագացման համատեքստում ստեղծվեց քաղաքական նոր իրադրություն. օգտվելով նպաստավոր պայմաններից՝ ԽՍՀՄ տարածքում գտնվող ազգային միավորումները հռչակեցին իրենց անկախությունը:

Մինչ այդ ԽՍՀՄ պետական բարձրագույն օրենսդիր ատյանը 1990 թ. ապրիլի 3-ին ընդունել էր «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետությունների դուրս գալու հետ առնչվող հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը: Օրենքի 3-րդ հոդվածում ասվում էր. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր ու շրջաններ ունեցող միութենական հանրապետություններում հանրաքվեն անց է կացվում յուրաքանչյուր ինքնավարության հաշվով առանձին: Ինքնավար հանրապետությունների և կազմավորումների ժողովուրդներին է մնում ԽՍՀՄ-ում կամ դուրս եկող միութենական հանրապետությունում մնալու, ինչպես նաև իր պետական կարգավիճակի հարցը դնելու իրավունքը: Այն միութենական հանրապետությունում, որտեղ կան տվյալ վայրի բնակչության մեծամասնությունը կազմող և հոծ թվով բնակվող ազգային խմբերի տարածքներ, հանրաքվեն հանրագումարելիս քվեարկության արդյունքները հաշվի են առնվում առանձին»:[10] Նկատենք նաև, որ Ադրբեջանի անկախությունը ընդունվեց ոչ թե հանրաքվեի արդյունքում, այլ հայտարարվեց հանրապետության գերագույն օրենսդիր մարմնի կողմից, որի կազմի մեջ չկար ներկայացուցիչ ո՛չ ԼՂԻՄ-ից և ո՛չ էլ այլ հայաբնակ տարածքներից: Մյուս կողմից էլ՝ Հայաստանի ՀՀՇ-ական իշխանությունը լիովին չէր կողմնորոշվել Արցախի վերամիավորման՝ համայն հայության պահանջի հարցում: 1991 թ. սեպտեմբերի 2-ին

[8] Վ. Բաբխուդարյան, Ա. Հակոբյան, Հ. Հարությունյան և ուրիշ./ Հայոց պատմություն (Նորագույն շրջան): Դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար -Եր., «ՄԱՆՄԱՐ», 2014. էջ 122:
[9] Մկրտումյան Լ., Նշվ. աշխ. , Երևան, 2016, էջ 430:
[10] «Արցախ», Ստեփանակերտ, 26.08.1993:

Մոսկվայում կայացած ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նստաշրջանում Լ. Տեր-Պետրոսյանը պահանջեց միայն բարձրացնել ինքնավար մարզի կարգավիճակը:[11]

1991թ. դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որից հետո՝ 1992 թ. հունվարի 6-ին, Ստեփանակերտում՝ նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում, 80 դիտորդների ու լրագրողների ներկայությամբ «Հայր մեր» տերունական աղոթքով իր աշխատանքներն սկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Նույն օրն ընդունվեց «ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը»[12]: Հանրապետության սահմանները պաշտպանելու և բնակչության անվտանգությունն ապահովելու համար հենց առաջին նիստում որոշվեց ստեղծել ԼՂՀ իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական կարգի պահպանության ու պետական անվտանգության մարմիններ և բոլոր ռազմական ուժերը միավորել մեկ հրամանատարության ներքո:

Արցախահայության ինքնորոշումը չէր խախտում միջազգային ոչ մի հիմնարար, այդ թվում և պետության տարածքային ամբողջականության սկզբունք: Ազգերի ինքնորոշման իրավունքը առանց գաղութային կամ այլ ժողովուրդների տարբերակման, արտացոլված է միջազգային բոլոր հիմնարար փաստաթղթերում:

1.2 Հասարակական_քաղաքական կյանքը 1991-1997 թթ

Մինչև ԼՂՀ հռչակումը և ԳԽ ընտրությունները, ԼՂ-ում որոշ չափով պահպանվում ու գործում էին խորհրդային իշխանության մարմինները: Սակայն նրանց գործունեությունը թեև հիմնված էր ԽՍՀՄ օրենքների վրա, այնուամենայնիվ, ամբողջովին ենթարկեցված էր Ադրբեջանի կազմից դուրս գալու և ինքուրույն պետականություն ստեղծելու նպատակները հետապնդող համաժողովրդական շարժման խնդիրներին: Հենց այդ նպատակն էր հետապնդում մարզային խորհրդի գործկոմի 1991թ. հունիսի 11-ի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարները, ԼՂԻՄ-ի շրջգործկոմների նախագահները: Քննարկելով մարզում ստեղծված աղետալի վիճակը՝ ակտիվը որոշեց ձեռնարկել կազմակերպչական անհետաձգելի միջոցները՝ ընդունելով մարզգործկոմի նախագահ Ս. Բաբայանի հրաժարականը: Նախագահի պարտականությունների կատարումը դրվեց նրա առաջին տեղակալ Լ. Պետրոսյանի վրա:[13]

ԼՂՀ-ի հռչակման մասին 1991թ. սեպ. 2-ին ընդունված հռչակագրում ԼՂԻՄ-ը ժողովրդական պատգամավորի մարզային խորհուրդը և նրա գործկոմը ճանաչվեցին որպես ԼՂՀ պետական իշխանության

---

[11] Բալայան Վ., Հակոբյան Տ., Պատմական նստաշրջան, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ նիստի արձանագրությունը, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, ԱրՊՀ, 2008, էջ 12:

[12] **Арутюнян В.**, События в Нагорном Карабахе, хроника, часть IV, январь 1992 г.- июль, Ереван, изд. «Гитутюн»
НАН РА,1997, էջ 109:

[13] **Арутюнян В.**, События в Нагорном Карабахе Ереван 1997 с. 26.

կառավարման ժամանակավոր բարձրագույն մարմին՝ մինչև համաժողովրդական ընտրությունների անցկացումը, իշխանության ու կառավարման հանրապետական մարմինների ձևավորումը:[14]

Արցախյան համաժողովրդական շարժման ալիքի վրա ստեղծվել է «Կռունկ» ոչ պաշտոնական կազմակերպությունը, որի նախագահ դարձավ Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատի տնօրեն Արկադի Մանուչարովը: Հաշվի առնելով ստեղծված բարդ իրավիճակը՝ 1989 թվականի հունվարի 20-ից ԽՍՀՄ-ում առաջին անգամ ԼՂԻՄ-ում մտցվեց կառավարման հատուկ ձև: Կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Հատուկ կառավարման կոմիտե՝ ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ա.Վոլսկու նախագահությամբ: Սակայն իրադրության հետագա սրումը կանխելու և նրա կայունացմանը նպաստելու կոչված կոմիտեի կարգավիճակը համարժեք չէր նրա առջև դրված խնդիրներին: Դրանից օգտվեց Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարությունը, փորձելով կոմիտեին շրջանցելով, իր պայմանները թելադրել մարզին:

Իրենց տրամադրության տակ չունենալով պաշտպանության համար բավարար միջոցներ՝ Լեռնային Ղարաբաղի իշխանության մարմինները բազմիցս դիմել են ԽՍՀՄ ամենաբարձր ատյանների օգնությանը: Բայց վերջիններիս կողմից արյունահեղությունը կանխելու միջոցներ չձեռնարկվեցին: Փաստորեն անպատասխան մնաց նաև Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահության դիմումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ երկրամասի հայ բնակչությանը զորակցելու խնդրանքով: 1989թ. դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և ԼՂԻՄ Ազգային խորհուրդը, «հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնությամբ տարանջատված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը», համատեղ նիստում ընդունեցին որոշում Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին: Հաշվի առնելով ստեղծված կացությունը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը իր 1990 թվականի հունվարի 15-ի հրամանագրով արտակարգ դրություն է մտցնում ԼՂԻՄ-ում, նրա սահմանակից ադրբեջանական շրջաններում: Պետական իշխանության և կառավարման մարզային ընտրովի մարմինների լիազորությունների դադարեցումից հետո մարզի բոլոր գործերի վարումը իր վրա վերցրեց զինվորական պարետատունը, որը փաստորեն ռազմական դրություն էր հաստատել Լեռնային Ղարաբաղի տարածքում: 1991թ. սկզբներից Ադրբեջանի ղեկավարությունը ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի հայ բնակչության իրավունքները ոտնահարող նոր գործողություններ ձեռնարկեց: Հունվարի 2-ին Ադրբեջանի հեռուստատեսությունը հաղորդեց Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի հրամանագիրը՝ ԼՂԻՄ-ում և նրան հարակից ադրբեջանական շրջաններում նախագահական կառավարում մտցնելու մասին: Մարզում տարածվեցին հայ ժողովրդին ուղղված թռուցիկներ՝ ամենասեղմ ժամկետներում Լեռնային Ղարաբաղի սահմանները թողնելու վերջնագրով:

[14] Նույն տեղում, էջ 73:

Ադրբեջանական ագրեսիայի առաջին թիրախներ են դարձել Հյուսիսային Արցախի բնակավայրերը: Դեռևս 1987-ի վերջերին Ադրբեջանական ԽՍՀ ՆԳՆ ստորաբաժանումները բռնություններ են իրագործել մարշալներ Հովհաննես Բաղրամյանի ու Համազասպ Բաբաջանյանի ծննդավայր Զարդախլու գյուղում և այն հայաթափել: Դա և 1990-ի հունվարի 12–14-ին Ազատի, Գետաշենի ու Մանաշիդի վրա հարձակումները դարձել են Հյուսիսային Արցախի հայության բացահայտ բռնի տեղահանության սկիզբը: Ագրեսիայի այդ նախապատրաստությունները, արցախահայությանն ի վերջո կանգնեցրին զինված ինքնապաշտպանության դիմելու անհրաժեշտության առջև: Մանավանդ, 1991-ի ապրիլի 30-ին Կենտրոնի ձեռնարկված «Օղակ» ռազմական գործողությունը, որի ընթացքում հայաթափվել են Հյուսիսային Արցախի Գետաշեն ու Մարտունաշեն բնակավայրերը, Հադրութի շրջանի ծայրամասային գյուղերը և Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանը, փաստորեն հաստատել է հիմնահարցը պատերազմի միջոցով լուծելու Ադրբեջանի որդեգրած քաղաքական գծի անշրջելիությունը: Ապրիլի 24-ին Հայաստանի նախագահը նամակ հղեց ԽՍՀՄ ղեկավարներին՝ խնդրելով շտապ միջոցներ ձեռնարկել տարածաշրջանի հայ բնակչության պաշտպանության և անվտանգության երաշխիքների ապահովման համար: Մայիսի 3-ին համանման խնդրանքով ԽՍՀՄ նախագահ Մ.Գորբաչովին դիմեց Հայաստանի կուսակցական ակտիվը:[15] Մայիսի 4-ին տեղի ունեցան Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հանդիպումները Միխայիլ Գորբաչովի և Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հետ, սակայն դրանք անցան անարդյունք:

Լեռնային Ղարաբաղում ստեղծված ծայրահեղ կացության առթիվ մարզխորհրդի գործկոմը արտակարգ դրություն հայտարարեց մարզում:՝ Նույն օրը մարզկոմը դիմեց ՄԱԿ-ին և աշխարհի մի շարք երկրների ղեկավարությանը՝ խնդրելով քաղաքական ապաստան տալ ԼՂԻՄ հայ բնակչությանը և դրանով իսկ նրան փրկել ֆիզիկական բնաջնջումից:

Սեպտեմբերի 22-ին խաղաղարար առաքելությամբ Ստեփանակերտ ժամանեցին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահներ Բ.Ելցինը և Ն.Նազարբաևը, որոնց ուղեկցում էր Ա.Մութալիբովը: Հաջորդ օրը Ժելեզնովոդսկում /Ռուսաստան/ Բ.Ելցինի և Ն.Նազարբաևի նախաձեռնությամբ Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունների միջև կայացան բանակցություններ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցի շուրջ, որոնց արդյունքում ընդունվեց համատեղ կոմյունիկե: Պատվիրակությունը գլխավորում էր արցախյան ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից մեկը՝ Ռոբերտ Քոչարյանը: Բ.Ելցինի և Ն.Նազարբաևի միջնորդական նախաձեռնությունը չհանգեցրեց Լեռնային Ղարաբաղի իրավիճակի բարելավմանը: Հոկտեմբերի 15-ին Ժելեզնովոդսկի փաստաթղթի կատարման ընթացքին ծանոթանալու համար Բաքու ժամանեցին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների

[15] Արցախյան ազատագրական շարժումը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը http://geopolitics.am.

ներկայացուցիչները: Նրանց ընդունեց Ադրբեջանի նախագահ Ա.Մութալիբովը, որը հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղի հարցը իրավազոր է լուծելու միայն Ադրբեջանը, և ոչ ոք չպիտի միջամտի իր ներքին գործերին:

Ի կատարումն 1991 թվականի դեկտեմբերի 10-ի Անկախության հանրաքվեում ժողովրդի կամքի արտահայտության, 1991 թվականի դեկտեմբերի 28-ին անց են կացվել ԼՂՀ պետական իշխանության բարձրագույն մարմնի՝ ԼՂՀ առաջին գումարման ԳԽ ժողովրդական պատգամավորների ընտրություններ: 1991 թվականի սեպտեմբերին՝ Ղարաբաղն անկախ հանրապետություն հռչակվելուց և նույն տարվա դեկտեմբերին՝ հանրաքվեի միջոցով այդ փաստը հաստատվելուց հետո, հարկ եղավ ստեղծել պետությանը անհրաժեշտ մարմիններ: 1992 թվականի հունվարի 7-8-ին կայացած ԼՂՀ Գերագույն խորհրդի անդրանիկ նիստում նախագահ ընտրվեց Արթուր Մկրտչյանը, վարչապետ՝ Օլեգ Եսայանը և պաշտոնի մնաց մինչև 1992 թ. օգոստոսը : Իր պաշտոնավարության երեքուկես ամիսների ընթացքում Մկրտչյանը ի հայտ բերեց պետական գործչին վայել լրջություն, և հերոս Ղարաբաղի դեկավարին բնորոշ արժանապատիվ կեցվածք: Նա դրեց այն հիմնաքարը, որի վրա բարձրացավ Լեռնային Ղարաբաղի պետականությունը: Պետական եւ ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին զուգահեռաբար չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ—ում, որը հետագայում անվանվեց ԼՂՀ խորհրդարան (այժմ՝ ԼՂՀ Ազգային ժողով), պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օր նշանակվեց 1991թ. դեկտեմբերի 28-ը: Դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որոնք անցկացվեցին մեծամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար եւ ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ է ընտրվել Արթուր Մկրտչյանը, նախագահի տեղակալ՝ Գեորգի Պետրոսյանը, Գերագույն խորհրդի քարտուղար՝ Վլադիկ Հակոբյանը:

Այսպիսով, ոչ վերջնականապես, բայց ձևավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը, որը պետք է լուծեր երկրին վերաբերող սոցիալ-տնտեսական և մի շարք այլ հարցեր: Սակայն պետք է նշել, որ կազմավորելով ԼՂՀ կառավարությունը՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը գործադիր իշխանության կարևորագույն լիազորություններն իրեն վերապահեց մինչև 1992 թ. Օգոստոս ամիսը (Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը): Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ իրադրությունը ռազմաճակատում դեռևս անչափ լարված էր և հնարավորություն չէր տալիս ԳԽ նախագահությանը ավարտել իշխանական լիազորությունների օպտիմալ բաշխումը, կառավարման համակարգի կենտրոնացումն ու կատարելագործումը: 1992թ. Օգոստոսի 15-ը դարձավ ԼՂՀ-ի պատմության մեջ ուղենշային տարեթիվ. այդ օրը ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ռազմական դրության ռեժիմն իրականացնելու համար <<ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին>> սահմանադրական օրենքի ինքնորդ բաժնի երրորդ հոդվածին համապատասխան՝ ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե՝ ՊՊԿ, որի նախագահ ընտրվեց Ռ. Քոչարյանը, ՊՊԿ նախագահի առաջին տեղակալ Բ. Առուշանյանը, ՊՊԿ նախագահի տեղակալ Կ. Բաբուրյանը: Պետք է նշել, որ ՊՊԿ-ն, իր ձևքը վերցնելով

ճշված լիազորությունները, շարունակեց և գործունեության առաջին պլան մղեց կառավարման համակարգի յուրովի կենտրոնացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև ԻՊ ուժերը կազմակերպական-հաստիքային կառուցվածքի անցնելու, այսինքն՝ բանակային ենթակառուցվածքների, պաշտպանական շրջանների ձևավորման գործընթացը: որոշման համաձայն ստեղծվեցին 6 ՊՇ-ներ:

Պետականաշինության միջոցառումները ուղեկցվում էին ԻՊ ուժերի նոր հաջողություններով, որոնք շարունակվում էին Շուշիի ազատագրումից հետո սկիզբ առած հաղթաբեռվը: ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի ողբերգական մահից հետո ստեղծված ներքաղաքական անկայուն իրադրությունը չսասանեց ԼՂ պետականության հիմքերը, ավելին՝ ԼՂՀ իշխանությունների վճռականության շնորհիվ 1992 թ. մայիսին ԻՊ ուժերը կարողացան ազատագրել Շուշին և Լաչինի շրջանի մի մասը՝ ցամաքային կապ հաստատելով հայկական երկու պետությունների միջև: ԻՊ ուժերը ապրիլի 3-ին գրավեցին շրջկենտրոն Քելբաջարը, իսկ մինչև ապրիլի 12-ը հակառակորդից մաքրեցին Մարտակերտի արևելյան հատվածը: Սրան հաջորդեց ԼՂՀ ԳԽ նախագահության ձևնարկած պետական շինարարության հաջորդ քայլը: Հունիսի 2-ին տեղի ունեցավ ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը, որտեղ քննարկվեց ԳԽ որոշ դեկավար պաշտոնների թափուր լինելը, կառավարության կազմի համալրման անհրաժեշտությունը և այլն: ԼՂՀ-ի պետականության կայացման ուղղությամբ ՊՊԿ-ի ձեռնարկած կարևոր քայլերից մեկը հանդիսացավ հանրապետության արտաքին քաղաքական գերատեսչության՝ ԱԳՆ ստեղծումը: ԼՂՀ արտգործնախարար նշանակվեց Ա. Ղուկասյանը:

Հետագա ռազմական գործողությունների ընթացքում 1992 թ. երկրորդ կեսին և 1993 թ. սկզբներին Ադրբեջանն ամեն ինչ արեց հայկական երկու պետությունների կապն ապահովող Լաչինի միջանցքը գրավելու համար, սակայն 1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը ԻՊՈՒ-ի ստորաբաժանումները ամբողջապես ազատագրեցին Լաչինի և Քելբաջարի տարածքները[16]՝ վերջնականապես խորտակելով թշնամու մտադրությունը: ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը, հունիսի 29-ին նամակով դիմելով ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆայելին, նշում է, որ վերջին օրերին վիճակն ավելի է սրվել: Նախագահի պաշտոնակատարն այդ ամենը կապում էր հանրապետությունում ներքաղաքական ճգնաժամի հետ, որտեղ իշխանության համար պայքարող հակադիր ուժերը օգտագործում էին Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև ընթացող պատերազմը որպես իրենց նպատակին հասնելու միջոց: ԼՂՀ իշխանությունները միջազգային ատյաններից պահանջում էին միջոցառումներ ձեռնարկել կրակը դադարեցնելու համար և արցախահայությանը փրկել ցեղասպանությունից, մինչդեռ նախագահի պաշտոնակատար Հեյդար Ալիևը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին և Գլխավոր քարտուղարին հաղորդում էր, թե հայ ագրեսորները զավթել են Ադրբեջանի տարածքի 17 տոկոսը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին կողմերին կոչ էր անում դադարեցնել ռազմական գործողությունները: ԼՂՀ ԱԳՆ Արկադի Ղուկասյանի և ԼՂՀ ՊԲ հրամանատար Սամվել Բաբայանի

[16] Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան., «Ամարաս», 2002, էջ 402:

ստորագրությամբ՝ ապրիլի 28-ին Մոսկվա ուղարկված ղարաբաղյան կողմի պատասխանում ԼՂՀ ղեկավարությունն իր համաձայնությունն էր տալիս 1994թ. ապրիլի 29-ի ժամը 00.01-ից ապահովել լիակատար հրադադարը և ռազմական գործողությունների դադարեցումը՝ կատարելով նույն թվականի փետրվարի 18-ի ֆառակողմ արձանագրության կետերը: Ադրբեջանին ոչինչ չէր մնում անել, բան ընդունել ՌԴ առաջարկությունը և հայտարարել ղարաբաղյան ռազմաճակատում կրակը դադարեցնելու իր պատրաստակամության մասին

Գլուխ 2. ԼՂՀ բանակցային գործընթացը 1991-1997 թթ.

2.1 Լեռնային ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացումը

Անկախության համար արցախահայության դարավոր պայքարի պատմության մեջ սա պետականության նոր աստիճան է, որն ամփոփում է ազգային-ազատագրական պայքարի ձեռքբերումները գավառների մելիքություններից, Ղարաբաղի հայկական մարզի ծրագրից, ժողովրդական ինքնակառավարումից և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից հետո:[17]

1988-1991 թթ. Ղարաբաղյան հիմնախնդիրը ենթադրվում էր լուծել ԽՍՀՄ լիազորության և ներքին գործերի շրջանակներում: Արցախի Հանրապետության հռչակման և Հայաստանում անկախության հանրաքվեի անցկացման օրերին Ադրբեջան–Լեռնային Ղարաբաղ–Հայաստան ժամանեցին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահները, որոնց մասնակցությամբ 1991 թ. սեպտեմբերի 23-ին Ժելեզնովոդսկում կայացած բանակցություններում Հայաստանի և Ադրբեջանի միջև հուշագիր ստորագրվեց, որտեղ առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց հակամարտությունը փուլ առ փուլ կարգավորելու հարցը. ըստ որում նախ հակամարտության գոտում առկա խնդիրները միջնորդների օգնությամբ կարգավորել, ապա սկսել բանակցային գործընթացը: Այդ ժամանակ ԼՂՀ ղեկավարությունը, հանդես գալով հայտարարությամբ, նշեց, որ այդ փաստաթուղթը չի կարող լիարժեք համարվել, քանի որ ԼՂՀ պատվիրակության ստորագրությունը բացակայում է: Նույն թվականի դեկտեմբերի 11-ին Բելառուսի Բելովեժյան թավուտում Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի նախագահների միջև ստորագրվեց Անկախ Պետությունների Համագործակցության կազմավորման վերաբերյալ հռչակագիրը: Դրանից հետո Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը տեղափոխվեց որակապես միջազգային այլ մակարդակ[18]:

1992 թ. հունվարից սկսած՝ Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում խոսվում էր ԼՂՀ հիմնախնդրի լուծման գործում մասնակցություն ունենալու առաջարկի մասին[19]: ԱՄՆ նախագահ Ջ. Բուշը 1992 թ. ապրիլին երկու անգամ զանգահարել է Լ. Տեր-Պետրոսյանին և հայտնել, որ ԱՄՆ-ն պաշտպանում է ղարաբաղցիների պահանջը:

---

[17] Ղահրամանյան Կ., Ղազինյան Ա., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. պետականության ակունքները, Երևան, 2008, էջ 64:
[18] Ազդակ (Բեյրութ), 28.II.1998, Բացառիկ, էջ 99:
[19] Աբրահամյան Հ., , նշվ. Աշխ., էջ 348-349:

1992 թ. հունվարին խոսվում էր Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը միջազգայնացնելու վերաբերյալ: Այդ ժամանակ Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը Թուրքիա այցելելուց հետո հանդես եկավ ընդդեմ ԼՂ հիմնահարցի միջազգայնացմանը՝ այն հայտարարելով Ադրբեջանի ներքին գործ:

Հունվարի վերջին Հայաստանը և Ադրբեջանը դարձան Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի (ԵԱՀԽ, հետո խորհուրդը՝ կոմիտե) անդամ. Ղարաբաղի հարցը, ըստ էության, դուրս եկավ Երևանի և Բաքվի ներքին գործ լինելու շրջանակից:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը 1992 թ. հունվարի վերջին մասնակցում էր այդ օրերին Պրահայում տեղի ունեցող Հելսինկյան գործընթացի մասնակից երկրների արտգործնախարարների խորհրդի նիստին: Հանդիպելով լրագրողներին՝ նշում է, որ Լեռնային Ղարաբաղը չպետք է պատկանի ո՛չ Հայաստանին, ո՛չ Ադրբեջանին. դա է նրա անկախության առավել հավաստի ուղին: ՀՀ ԱԳ նախարարը հայտարարում է, թե Հայաստանի կառավարությունը պաշտպանում է Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը միտված յուրաքանչյուր խաղաղասիրական նախաձեռնություն, այդ թվում՝ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր կամ Եվրոպայի անվտանգության և համագործակցության դիտորդների խումբ Լեռնային Ղարաբաղ ուղարկելը: Սակայն Ադրբեջանը Թուրքիայի համաձայնությամբ դեմ գնաց այդ առաջարկությանը և խափանեց ծրագիրը:

Եվրախորհուրդը 1992 թ. Մարտի 9-ին կոչով դիմելով Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին, հորդորում է կրակն անմիջապես դադարեցնել Լեռնային Ղարաբաղում: Այդ կապակցությամբ մարտի 11-ին Ադրբեջանի ԳԽ նախագահ Մ. Մամեդովը հեռախոսազրույց ունեցավ Ա. Մկրտչյանի հետ: Ի վերջո, Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները մարտի 15-ին Թեհրանում ստորագրեցին Իրանի միջնորդությամբ ձեռք բերված զինադադարի համաձայնագիր-նախագիծը, իսկ մարտի 19-ին հակամարտող կողմերը ձեռք բերեցին մեկշաբաթյա զինադադարի համաձայնություն, որը սակայն, բազմիցս խախտվեց ազերիների կողմից:

1992 թ. սեպտեմբերին Հռոմում ավարտվեց ԼՂ հարցին նվիրված խորհրդաժողովը առանց որևէ էական որոշման: Միայն հստակեցվեց, որ ԼՂ հարցի լուծումը վերապահվում է ԵԱՀԿ-ին, այլ ոչ թե ՄԱԿ-ին[20]: Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը , 1994 թ. սեպտեմբերի վերջին ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, նշել է, որ Հայաստանի մտահոգության առարկան միշտ էլ եղել է Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության անվտանգության հարցը: Պատմության զարգացման բերումով հայկական դիվանագիտությունը չունի այն փորձը և անվանդույթները, որոնց տիրապետում են այլ՝ պետականություն ունեցած երկրները, իսկ շահում են այն պետությունները, որոնք լավ են սերտում անցյալի դասերը:

[20] Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2000, էջ 179:

2.2. Խաղաղարար միջազգային ջանքերը 1991-1997 թթ.

1992 թ. փետրվարի 20-ին Մոսկվայում բանակցությունների սեղանի շուրջ նստեցին Ադրբեջանի և Հայաստանի արտաքին գործերի նախարարներ Հուսեին աղա Սադիխովը և Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ մասնակցող միջնորդ, Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Անդրեյ Կոզիրևի մասնակցությամբ: Մեկ օր անց՝ փետրվարի 21-ին, ԼՂՀ իշխանությունները դիմել են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և Անվտանգության խորհրդի մշտական անդամ պետություններին՝ խնդրելով «Լեռնային Ղարաբաղի իրադարձության հարցը քննարկել ՄԱԿ-ի խաղաղարար ուժերում և Լեռնային Ղարաբաղը հայտարարել ազատ գոտի»: Միևնույն ժամանակ պահանջվում է Ադրբեջանի գործողությունները ԼՂՀ-ի նկատմամբ գնահատել որպես հանցագործություն և պետք է դատապարտվի ամբողջ համաշխարհային ընկերակցության կողմից: Թե՛ այդ դիմումը և թե՛ արտաքին գործերի նախարարների վերոհիշյալ բանակցությունները Արցախին նպաստող շոշափելի հետևանքներ չթողեցին: Փետրվարի 27-28-ին ԵԱՀԿ-ն քննարկելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ կապված հարցը, շեշտեց սահմանների անձեռնմխելիությունը և ԼՂՀ-ն ճանաչեց Ադրբեջանի տարածքում՝ ինքնավարության իրավունքով: Միաժամանակ արձանագրվեց Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքը և բանակցություններին նրա մասնակցելու անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման հարցում հստակություն չկար, թեև միջազգային հանրությունը անհանգստացած էր ԼՂՀ ծանր վիճակի համար: Ըստ էության, Ղարաբաղյան հիմնախնդրի միջազգայնացման հարցին ընթացք տալը հասունացել էր. նախընտրելին բանակցային գործընթացով լուծումն էր: Սակայն Ադրբեջանը բոլոր ջանքերը գործադրում էր հարցը լուծել ռազմական ուժով[21]: 1992 թ. մարտյան այդ օրերին տարածաշրջան այցելեց ՄԱԿ-ի պատվիրակությունը՝ Սայրուս Վենսի գլխավորությամբ, որի նպատակն էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի համար ստույգ տեղեկություններ պատրաստել տարածաշրջանի վերաբերյալ: Մարտի 20-ին այդ պատվիրակությունը Աղդամով Ստեփանակերտ ժամանեց ու հանդիպեց ԼՂՀ նախագահ Արթուր Մկրտչյանին և քննարկեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող որոշ հարցեր:

Ի վերջո, 1992 թ. հունիսի 1-ին Հռոմում սկսվեց Մինսկի հանձնաժողովի 11 պետությունների ներկայացուցիչների խորհրդաժողովը, որտեղ որոշում ընդունվեց Մինսկի համաժողովն անցկացնել հունիսի 23-ին: Սակայն Լեռնային Ղարաբաղը հրաժարվեց մասնակցել համաժողովին, քանի որ պետք էր մասնակցեր դիտորդի կարգավիճակով: Դրանից խիստ մտահոգ էր Լևոն Տեր-Պետրոսյանը. ԼՂՀ-ի դիրքորոշումը

[21] Голос Армении, 6.III.1992.

պաշտպանելու փոխարեն նա խիստ քննադատության ենթարկեց Արցախի Հանրապետության ղեկավարությանը և պահանջեց պատվիրակություն ուղարկել Հռոմ: Ակնհայտ է, որ մինչ այդ ԼՂՀ ԳԽ նախագահությունը Մինսկի համաժողովի նախագահ Մ. Ռաֆայելիին ուղարկած դիմումում բացատրել էր ԼՂՀ-ի պատվիրակության՝ Հռոմ չմեկնելու պատճառները: Հռոմ մեկնելու հարցը վեց ժամ քննարկվելուց հետո ԼՂՀ ԳԽ-ն որոշում կայացրեց ձեռնպահ մնալ Հռոմի նախնական խորհրդակցության աշխատանքներին մասնակցելուց[22]: ԼՂՀ իշխանությունը Հայաստանի իշխանությունների նման դիրքորոշման պայմաններում ուրիշ ելք չուներ, քան կատարել ՀՀ ղեկավարության պահանջը:

1993 թ. հունվարի սկզբին Մոսկվայում՝ փակ դռների ետևում, ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ բանակցություններ կայացան Հայաստանի, Ադրբեջանի, ԱՄՆ-ի և Թուրքիայի ներկայացուցիչների միջև: Նմանատիպ հանդիպում էր տեղի ունեցել նաև 1992 թ. դեկտեմբերին՝ Ժնևում: Երկու դեպքում էլ ԼՂՀ-ի ներկայացուցիչները բանակցություններին չեն հրավիրվել: Դիտորդների կարծիքով, հենց այդ պատճառով է, որ բանակցությունները անհաջողության են մատնվել: Հունվարի 3-ին ՌԴ և ԱՄՆ նախագահները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ մտահոգություն հայտնեցին ԼՂ-ի իրադարձությունների վերաբերյալ: Այդ առնչությամբ հունվարի 8-ին ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը ԳԽ նախագահության անունից հանդես եկավ հայտարարությամբ. «ԼՂՀ ղեկավարությունն ըմբռնումով ընկալեց ԼՂ-ի վերաբերյալ ՌԴ նախագահ Բ. Ելցինի և ԱՄՆ նախագահ Ջ. Բուշի համատեղ հայտարարությունը, - մասնավորապես ասված էր փաստաթղթում: - Բնական է, որ աշխարհը և, մասնավորապես, մեծ տերությունները մտահոգված են տարածաշրջանում ստեղծված իրավիճակով, որտեղ արդեն 6 տարի շարունակվող հակամարտությունը վերջին տարում վերաճեց ԼՂՀ-ի դեմ ուղղակի ագրեսիայի»: գործունեության անտեսմանը և ձախողմանը միտված Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության վրա:

1993 թ. փետրվարի 26-ից մինչև մարտի 1-ը Հռոմում կայացավ ԼՂ հակամարտության կարգավորման ԵԱՀԽ Մինսկի խմբի խորհրդակցությունը, որին մասնակցեցին ՀՀ և ԼՂՀ պատվիրակությունները: Խորհրդակցությունում ընդունվեց «Լիազորությունների պայմաններ» կոչվող մի փաստաթուղթ, որը սահմանում էր ԼՂՀ ժամանելիք դիտորդների առաջադրանքները: ԼՂՀ ԳԽ նախագահությունը մարտի 15-ի նիստում քննադատեց ԼՂՀ պատվիրակության գործունեությունը Հռոմում մասնավորապես նրան մեղադրելով այնպիսի փաստաթղթերի ընդունմանը մասնակցության համար, որոնցում ԼՂՀ-ն դարձյալ չի ընդունվել որպես հակամարտող կողմ, այլ նրա պատ վիրակության մեջ ճանաչվել են 2 համայնքներ՝ հավասար իրավունքներով: Իսկ հակամարտող կողմեր են դարձյալ համարվել Հայաստանը և Ադրբեջանը: ԼՂՀ ԳԽ նախագահության դիրքորոշման իրավացիությունը հաստատելու է գալիս Ադրբեջանի ԱԳ նախարար Թ. Գասումովի՝ 1993թ. մարտի 6-ին մամլո ասուլիսում կատարած այն հայտարարությունը, թե Հռոմի հանդիպման գլխավոր

[22] Արցախ, 1.VII.1992:

ձեռքբերումն է հանդիսացել ռազմական հակամարտության գոտում դիտորդների տեղակայմանը կողմերի տված համաձայնությունը: Չնայած Հռոմի հանդիպմանը ընդունված կոչին՝ անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները հակամարտության գոտում, Ադրբեջանը մարտի 20-ից ուժեղացրեց ռազմական ճնշումը: Հակառակորդի ուժերը առանձնապես ակտիվ էին գործում Մարտակերտի եւ Լաչինի շրջաններում: Ակնհայտ էր, որ հանրապետության անվտանգությունն ապահովելու համար Լաչինի եւ Քելբաջարի (Քարվաճառ) տարածքներում գտնվող կրակակետերի ոչնչացումը դարձել է կենսական անհրաժեշտություն[23]: Դրանից ելնելով՝ ԻՊՈՒ ստորաբաժանումները մարտի 27-ին ձեռնարկեցին ռազմական գործողություններ եւ մինչեւ ապրիլի 5-ը հակառակորդին հարկադրեցին թողնել այդ շրջանների տարածքները: Քելբաջարի իրադարձությունների կապակցությամբ՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը ապրիլի 9-ի հայտարարությամբ ընդգծում էր Քելբաջարի ռազմագործողության անհրաժեշտությունը, որն ապահովեց Մարտակերտի շրջանի բնակչության անվտանգությունը:

1994թ. սկզբներին Ադրբեջանը մեկ անգամ եւս փորձեց բեկում մտցնել պատերազմում՝ ռազմաճակատով մեկ ակտիվացնելով հարձակողական գործողությունները: Ծանր մարտեր ծավալ վեցին Օմարի լեռնանցքից մինչեւ Արաքս: Ապահովելով պաշտպանությունը եւ իրականացնելով հակահարձակողական մի շարք հաջող գործողություններ՝ ԼՂՀ զորքերը փետրվարի սկզբներին ձեռնամուխ եղան հակառակորդի քելբաջարյան խմբավորման ոչնչացման ռազմագործողություններին: Փետրվարի 18-ին այդ շրջանի հյուսիսային հատվածը՝ ներառյալ Օմարի լեռնանցքը, լիովին անցավ ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ: Այդպիսով՝ Քելբաջարի շրջանը ամբողջովին ազատագրվեց ԼՂՀ ՊԲ-ի կող մից: Փետրվարի վերջին եւ մարտի սկզբներին հիմնական մարտերը ծավալվեցին Հորադիզի ուղղությամբՀաջողությունը ՊԲ զորամասերին ուղեկցում էր նաեւ ռազմաճակատի հյուսիսարեւելյան հատվածում, որտեղ ապրիլի 10-ին ծավալած հակահարձակողական գործողությունների շնորհիվ նրանք տիրացան Գյուլիստան-Թալիշ հատվածի մի շարք կարեւոր ռազմավարական բարձունքների[24]: Պաշտպանության բանակը ապրիլի կեսերին ազատագրեց Մարտակերտի շրջանի հայկական Լեւոնարխ, Մատաղիս եւ Թալիշ գյուղերը: Իսկ մինչ այդ ռազմաճակատի հարավարեւելյան ուղղությունում նրանք վերահսկողության տակ էին վերցրել Աղդամ-Բարդա մայրուղին: Այսպիսով՝ ռազմական անընդմեջ պարտությունները Ադրբեջանին հարկադրեցին ընդունել ՌԴ-ի կողմից արված հրադադարի առաջարկը: Մայիսի 5-ին Ռուսաստանի, Կիրգիզիայի եւ ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի միջնորդությամբ Կիրգիզիայի մայրաքաղաք Բիշքեկում ԱՀ-ն, ԼՂՀ-ն եւ ՀՀ-ն ստորագրեցին հրադադարի մասին մի արձանագրություն, որը ղարաբաղյան հակամարտության կարգավորման պատմության մեջ մտավ «Բիշքեկյան» անվամբ: Միջպետական պայմանագրի իրավական բնույթ ունեցող Բիշքեկյան արձանագրության իրավաբանական ձեւակերպման նպատակով, մայիսի 16-ին Մոսկվայում, ՌԴ

[23] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 402:
[24] http://www.nkr.am/arm/history/voina.htm.

պաշտպանության նախարար Պ. Գրաչովի հովանու ներքո եւ մասնակցությամբ, բանակցություններ սկսվեցին մի կողմից՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի, ԼՂՀ ՊԲ հրամանատար Ս. Բաբայանի եւ մյուսկողմից՝ ԱՀ պաշտպանության նախարար Մ. Մամեդովի միջեւ[25]: Բանակցությունների ընթացքում առաջարկվեց ստորագրել համաձայնագիր 1994թ. մայիսի 17-ի 00 ժամից կրակը դադարեցնելու մասին, նաեւ նախատեսված էր զարաբաղյան եւ ադրբեջանական զորքերի տարանջատում, կողմերի միջեւ բուֆերային գոտու ստեղծում եւ այնտեղ խաղաղարար ուժերի տեղակայում:

Ապա 1995-1996 թթ. Մոսկվայում տեղի ունեցան ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ԼՂ հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններ, բայց հակամարտող կողմերի դիրքորոշումները մնացել էին նույնը: 1997 թ. աշնանը պարզ դարձավ որ բանակցություններին որպես հիմք ընդունվել էր հակամարտության փուլ առ փուլ կարգավորման տարբերակը, որը, սակայն, նշանակում էր անվերապահ կապիտուլյացիա: Միևնդեռ, ըստ Ռ. Քոչարյանի, եթե Երեւանն ունենար իր հստակ , պարզ տեսակետը, ապա հիմնահարցի լուծումը ավելի կհեշտանար: Ակնհայտ է, եր Ղարաբաղը համազգային հիմնահարց է, և ցանկացած լուծում պետք է ձեռք բերվի համաձայնությամբ:

Եզրակացություն

Ամփոփելով խնդրո առարկա հարցի ուսումնասիրությունը, կարող ենք փաստել, որ զարաբաղյան հիմնախնդիրն առանձնանում է թե՛ իր բարդությամբ, և թե՛ իր շահերի ու դիրքորոշումների հակասությամբ: Աշխատության մեջ գիտական ուսումնասիրության հարթություն է բարձրացվել երկրորդ հայկական հանրապետության՝ ԼՂՀ-ի հռչակման եւ պետական շինարարության գործընթացի պատմությունը և կատարվել հետևյալ եզրահանգումները.

- ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ ԳԽ-ի ձեւավորման գործընթացը: Պետական եւ ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին զուգահեռաբար, չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: Այդ կառույցների ստեղծումը, չնայած ռազմաքաղաքական դժվարին կացությանը, անցավ միջազգային ժողովրդավարական չափանիշներին լիովին համապատասխան:
- ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի ողբերգական մահից հետո ստեղծված ներքաղաքական անկայուն իրադրությունը չսասանեց ԼՂ պետականության հիմքերը, ավելին, ԼՂՀ իշխանությունների վճռականության շնորհիվ ԻՊ ուժերը կարողացան ազատագրել Շուշին եւ Լաչինը՝ ցամաքային կապ հաստատելով հայկական երկու պետությունների միջեւ:

[25] Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 153:

- Միջազգային հանրության՝ առաջին հերթին ԵԱՀԿ-ի կողմից երկակի ստանդարտների կիրառումը դժբախտաբար գործելառն է դարձել, սակայն պակաս կարևոր չէ նաև միջնորդ պետությունների դերակատարությունը հակամարտության կարգավորման գործընթացում:
- Վերլուծելով ԼՂՀ-ում 1991-1997 թթ. տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունները՝ գալիս ենք այն համոզման, որ բանակցային գործընթացի անարդյունավետության հիմնական պատճառը եղել է միջազգային հանրության կողմից ժամանակի պահանջներին համապատասխանող քայլեր չձեռնարկելը:
- Այսպիսով՝ ԼՂՀ-ում պետական շինարարության գործընթացը հաստատեց իր շարունակական լինելու իրավունքը եւ ԼՂՀ-ում ժողովրդավարական պետության կառուցման ու կայացման ուղղույթ վերցրեց:

Օգտագործված գրականության ցանկ

Մենագրություններ (հայերեն և ռուսերեն)

1. Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Երևան, Ամարաս, 2001, 240 էջ:

2. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ, գիրք Գ (1985-2000), Ստեփանակերտ, <<Դիզակ պլյուս>>, 2007, 744 էջ:

3. Աբրահամյան Հ., Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, <<Լույս>>, 1997, 96 էջ:

4. Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան,

5. <<Հայաստանի ԳԱ>>, 1992, 104 էջ:

6. ԱբՀակյան Ա., Արցախյան գոյապայքարը 1985-1992թթ., Երևան, <<Լինգվա>>,2004, 246 էջ :

7. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, <<Սոնա>>, 2012, 414 էջ:

8. Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը: Երևան: Ամարաս: 2002: 417 էջ:

9. Բալայան Տ. Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ.. Երևան 2004թ. 224 էջ:

10. Բաղրյան Վ., Ֆենոմեն, Ստեփանակերտ, <<Սոնա>>, 1998, 272 էջ:

11. Կապուտիկյան Ս., Էջեր փակ զզրոցներից, Երևան, <<Ապոլոն>>, 1995, 688 էջ:

12. Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի ուղին. 1991-1994թթ., Պատմական գիտությունների թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2001, 196 էջ:

13. Հարությունյան Մ. Ա., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Երևան, 2000, 176 էջ:

14. Հարությունյան Վ. Բ., Արցախ, հիմնահարցի ակունքները, Ստեփանակերտ, 1998, 105 էջ:

15. Հակոբյան Տ. <<ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ..) Երևան, Էդիթ պրինտ 2011, 208 էջ :

16. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Երևան, 1997, 822 էջ:

17. **Агаджанян М.**, Нагорно- Карабахский конфликт в свете заищты прав человека: политические и правовые аспекты, Ереван, “ Институт политических исследований”, 2009, стр.201.

18. **Керолайн К.**, Айбнер Д., Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, “ Гитутюн”, 1998, 106стр.

Պարբերական մամուլ

1. <<Արցախ>>, Ստեփանակերտ, 1992-1994:
2. << Ազատ Արցախ>>, Ստեփանակերտ, 2002:

3. <<Ազգ>>, Երևան, 1999:
4. <<Ազդակ>> (Բեյրութ), 28.II.1998, Բացառիկ, էջ 99:
5. <<Հայաստանի Հանրապետություն>>, 4.II.1992:
6. <<Դրոշակ>>, 1992, N 10, էջ 7:
7. <<Երկիր>>, 8.V.1992:
8. <<Голос Армении>>, 6.III.1992:
9. <<Известия>>, 1.II.1992:

Համակարգչային կայքէջեր

1. http://www.findarmenia.com/arm/history/2
2. http://gov.nkr.am/?section=resources/index&type=9&subtype=47.
3. http://www.nankr.am/hy/14
4. http://www.nkr.am/hy/permanent-representations/104/
5. http://armtoday.info/default.asp
6. http://nkr.am/hy/news/2016-03-30/799/;
7. http://nkr.am/hy/news/2016-03-04/793